ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 04.03.2013թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳԲԽ-12/13 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-12/13 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով Պետական պահպանության գլխավոր վարչության կողմից 12.02.2013թ. ներկայացված բողոքը, ինչպես նաև ուսումնասիրելով ԳԲԽ-12/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը պարզեց.

1. Պետական պահպանության գլխավոր վարչության կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

Պետական պահպանության գլխավոր վարչությունը 12.02.2013թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքով հայտնել է, որ «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից 2012թ. դեկտեմբերի 27-ին կազմակերպված «ՀՊՃՀ-ԲԸԾՁԲ-13/1» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրային որոշման արդյունքում, գնահատելով մասնակիցների ներկայացրած փաստաթղթերը, ներկայացված գնային առաջարկների հիման վրա առաջին տեղ զբաղեցնող է ճանաչվել «ԼԵԳԻՈՆ Ե. Ս. Է.»

ՍՊԸ-ն, երկրորդ տեղ՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությանը:

Պետական պահպանության գլխավոր վարչությունը ցանկացել է նշել մի քանի փաստեր, որոնք ուշադրության չեն արժանացել գնահատող հանձնաժողովի կողմից որոշում կայացնելիս:

«ՀՊՃՀ-ԲԸԾՁԲ-13/1» ծածկագրով նախատեսված մրցույթի հայտով ներկայացված պայմանագրի Հավելված N 1 (Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց) և Հավելված N 2-ի (Պահպանվող շենքերի մակերեսները, հասցեն, համարը, նշանակությունը և պահպանության ժամերը) վերլուծության ընթացքում ի հայտ են եկել հետևյալ անհամապատասխանությունները և թերությունները, մասնավորապես.

Հավելված N 1-ի մասով (բնութագիր).

1. Բնութագրի 1-ին կետով սահմանվում է, որ մասնակից ընկերությունը պետք է ունենա տվյալ ոլորտում առնվազն 5 տարվա գործունեության փորձ, մինչդեռ այդ որակավորման չափանիշը արդեն իսկ գնահատվել է հրավերի 2-րդ մասի 1 և 2-րդ ենթակետերով, ինչպես նաև վերը նշված պահանջը չի համապատասխանում այդ կետով սահմանված փորձառության ժամկետներին, որոնցով սահմանվել են հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող 3 տարիների ժամանակահատվածը: Անհասկանալի է նաև, թե ինչու է պատվիրատուն աշխատակիցների տարիքը սահմանափակում 22-55 տարեկանների միջակայքում, որքանով է պատվիրատուն համոզված, որ օրինակ, 21-24 տարեկան աշխատակիցները չեն կարող բավարար չափով կատարել իրենց ծառայողական պարտականությունները:

2. Բնութագրի 2-րդ կետով սահմանված է վերահսկողության տակ գտնվող տարածքի նվազագույն մակերես (Հավելված 2) և չի նշվել առավելագույն մակերեսը: Վերոհիշյալից կարելի է ենթադրել, որ պատվիրատուն պայմանագրի գործողության ընթացքում ինչ-ինչ հանգամանքներից ելնելով իրեն կարող է իրավունք վերապահել կատարողին առաջադրել պահպանության ևս որոշակի չափի մակերես:

3. Բնութագրի 3-րդ կետը թերի է, քանի որ հասկանալի չէ կապի որ տեսակի մասին է խոսքը՝ ստացիոնար, թե ձեռքի հատուկ կապի միջոց, բջջային, թե քաղաքային և այլն:

4. Անհասկանալի է բնութագրի 4-րդ կետի պահանջը, մասնավորապես տեսադիտման և ահազանգման համակարգերի իմացության ինչպիսի փորձ է պահանջում պատվիրատուն, ինչ չափորոշիչներով է այն գնահատվում և որն է համարվում բավարար:

5. Բնութագրի 5-րդ կետով նախատեսվում է, որ կատարող կողմը պետք է կանխի խոշոր նյութական արժեքների չարտոնված տեղաշարժը: Նշված կետի վերլուծությունից երևում է, որ պատվիրատուն խրախուսում է ոչ խոշոր նյութական արժեքների չարտոնված տեղաշարժը: Հասկանալի չէ, թե ինչ չափանիշներով պետք է ծառայություն իրականացնող անձը որոշի տվյալ նյութական արժեքը պատկանում է խոշոր, թե ոչ խոշոր նյութական արժեքների դասին: Նաև խոշոր նյութական արժեք ասելով պատվիրատուն ի նկատի ունի տվյալ արժեքի դրամական արտահայտությունը, թե ծավալը կամ մակերեսը, հստակ չի սահմանվում արտոնված տեղաշարժ թույլտվող մարմինը:

6. Բնութագրի 6-րդ կետում չի սահմանվում, թե հերթապահ մասը որ մասնաշենքում կամ տարածքում է տեղակայվելու, ինչ մակերես և հագեցվածություն պետք է ունենա: Նշված կետով սահմանվում է ավտոտրանսպորտային միջոցների առկայություն, տվյալ դեպքում պետք է պահանջվեր դրանց տեսակը, քանակը, համալրվածությունը (լուսաձայնային ազդանշան, հատուկ եզրագիծ, կատարողի տարբերանշանները) և այլն:

7. Բնութագրի 7-րդ կետով խախտվում է «Հրդեհային անվտանգության մասին» և «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքների դրույթները, որոնցով այս կետով նշված պարտականությունները դրված են պատվիրատուի վրա և որևէ առնչություն չունեն անվտանգության և պահակային ծառայության պարտականությունների հետ:

Հավելված N 2-ի մասով

1. Հավելված 2-ում նշված պահպանման ենթակա մասնաշենքերի մակերեսների հետ մեկտեղ պետք է նշվեր նաև դրանց հարկայնությունը, մուտքերի քանակը և այլն: Պատվիրատուի կողմից պետք է հստակ նշվեր, թե կատարողը անվտանգության ծառայությունը մատուցում է մասնաշենքերի միայն առաջին, թե բոլոր հարկերում և ինչ կարգով:

2. Նշված հավելվածում ներառված մասնաշենքերի ցանկից թիվ 4, թիվ 20 և ավտոտնտեսության մասնաշենքերի մակերեսները նշված չեն, որը կատարողին

հնարավորություն չի տալիս հստակ կազմակերպելու նշված մասնաշենքերի անվտանգությունը:

3. Հավելվածի աշխատանքային ժամերի այունակում նշված 12 ժամյա պահակետերում պատվիրատուի կողմից պետք է նշվեր ժամային միջակայքը, օրինակ 18:00-06:00 կամ 20:00-08:00 և այլն:

Նշված փաստերի ուսումնասիրությունից Պետական պահպանության գլխավոր վարչությունը հանգում է այն եզրակացության, որ Հավելված 1 (Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց) և Հավելված 2 (Պահպանվող շենքերի մակերեսները, հասցեն, համարը, նշանակությունը և պահպանության ժամերը) կազմվել են ոչ մասնագիտորեն և խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի, 12-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 30, 79-84 կետերի պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Պետական պահպանության գլխավոր վարչությունը խնդրել է դադարեցնել «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից «ՀՊՃՀ-ԲԸԾՁԲ-13/1» ծածկագրով կազմակերպված բաց մրցույթի ընթացակարգ հայտարարելու մասին որոշումը:

2. «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 19.02.2013թ. N 04/032-345 գրությամբ դիմել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան ՊՈԱԿ-ին՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 12.02.2013թ. Պետական պահպանության գլխավոր վարչության կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

«Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը 25.02.2013թ. N 01/13.1/382-13 գրությամբ Պետական պահպանության գլխավոր վարչության կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ հրավերը պայմանագիր կնքելու նպատակով մասնակցին ներկայացվող պահանջներն են, հայտը հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

Նույն օրենքի 25-րդ հոդվածի 12-րդ կետի հիման վրա «ՀՊՃՀ-ԲԸԾՁԲ-13/1» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերի 1-ին մասի 3-րդ կետով սահմանվում է հրավերի պահանջների վերաբերյալ մասնակցի իրավունքը՝ պարզաբանումներ պահանջելու և ստանալու վերաբերյալ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» ՊՈԱԿ-ն առաջարկել է ներքոհիշյալ հանգամանքներով պայմանավորված չբավարարել բողոքը՝

1. մասնակիցը հրավերով ունեցել է պարզաբանումներ պահանջելու և ստանալու իրավասություն և բավարար ժամանակ ու այդ հանգամանքը նաև կօժանդակեր պատվիրատուին՝ քննարկելու հնարավոր անհամապատասխանություններն ու թերությունները և դրանք ընդունելի համարելու դեպքում վերացնել դրանք՝ հրավերում փոփոխություններ կատարելու ձևով.

2. մասնակիցը ներկայացրել է հայտ, պատշաճ տեղեկացված լինելով, որ ոչ գնային պայմաններով բավարար գնահատվելու և ցածր գնային առաջարկ ներկայացնելու պարագայում կճանաչվեր որպես ընտրված մասնակից, հրավերի 1-ին մասի 9-րդ կետի հիման վրա տեղեկացված լինելով, որ կնքելիք պայմանագրում չեն կարող կատարվել այնպիսի փոփոխություններ, որոնք կարող են հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը:

3. մասնակիցը մեկ անգամ արդեն բողոքարկել է գնահատող հանձնաժողովի գործողությունները (2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելուց հետո) և պահանջել դադարեցնել գնման ընթացակարգը (բողոքը չի բավարարվել) որում նշված չեն եղել 12.02.2013թ. N 27-6-364 գրությամբ ներկայացված բողոքում բերված փաստերը:

Միաժամանակ նկատի ունենալով, որ «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի բնականոն գործունեության ապահովման անհրաժեշտությունից ելնելով պահանջվում է ունենալ անվտանգության և պահակային ծառայություններ ու դրանց չունենալու հանջամանքը հանրային շահի տեսակետից կարող է հանգեցնել էական վնասների, «Հայաստանի պետական

ճարտարագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը խնդրել է չկասեցնել գնման ընթացակարգը և դրա վերաբերյալ կայացված որոշման մասին տեղեկացնել ՊՈԱԿ-ին:

3. ԳԲԽ-12/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հանձնաժողովին ներկայացրել է իր եզրակացությունը և առաջարկել է Պետական պահպանության գլխավոր վարչության կողմից 12.02.2013թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը բավարարել՝ դադարեցնել «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կարիքների համար «Անվտանգության և պահակային ծառայությունների ձեռքբերման նպատակով» «ՀՊՃՀ-ԲԸԾՁԲ-13/1» ծածկագրով բաց ընթացակարգ հայտարարելու մասին «ՀՊՃՀ-ԲԸԾՁԲ-13/1» ծածկագրով բաց ընթացակարգի հանձնաժողովի 12.11.2012թ. թիվ 1 որոշումը:

4. ԳԲԽ-12/13 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-12/13 բողոքը քննող հանձնաժողովի հիմնավորումները և եզրահանգումները

Հանձնաժողովն ուսումնասիրել է Պետական պահպանության գլխավոր վարչության կողմից 12.02.2013թ. ներկայացված բողոքը, «ՀՊՃՀ-ԲԸԾՁԲ-13/1» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերը (այսուհետև՝ նաև Հրավեր), «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի (այսուհետև՝ նաև Պատվիրատու) 25.02.2013թ. Կենտրոնին հասցեագրված N 01/13.1/382-13 գրությունը, Հրավերին կից պայմանագրի նախագծի N 1 հավելվածը՝ տեխնիկական բնութագիրը, N 2 հավելվածը, «ՀՊՃՀ-ԲԸԾՁԲ-13/1» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ նաև գնահատող հանձնաժողով) 27.12.2012թ. ժամը 12:00-ին կայացած նիստի N 3 արձանագրությունը և «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի եզրակացությունը:

«Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ անվտանգության և պահակային ծառայությունների ձեռքբերման

նպատակով կազմակերպվել է «ՀՊՃՀ-ԲԸԾՁԲ-13/1» ծածկագրով բաց ընթացակարգ (այսուհետև՝ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել թվով 4 կազմակերպություններ, այդ թվում Պետական պահպանության գլխավոր վարչությունը:

Գնահատող հանձնաժողովը 27.12.2012թ. ժամը 12:00-ին կայացած նիստի N 3 արձանագրության 2-րդ կետի ա) ենթակետով որոշում է կայացրել Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «ԼԵԳԻՈՆ Ե. Ս. Է.» ՍՊԸ-ին, իսկ երկրորդ տեղը՝ Պետական պահպանության գլխավոր վարչությանը:

Բողոքաբեր կազմակերպությունը ներկայացված բողոքով հայտնել է, որ բողոքում նշված փաստերի ուսումնասիրությունից հանգում է այն եզրակացության, որ Հավելված 1 (Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց) և Հավելված 2 (Պահպանվող շենքերի մակերեսները, հասցեն, համարը, նշանակությունը և պահպանության ժամերը) կազմվել են ոչ մասնագիտորեն և խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի, 12-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 30, 79-84 կետերի պահանջները:

1. Պետական պահպանության գլխավոր վարչությունը Կենտրոնին ներկայացված բողոքով հայտնել է, որ «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ անվտանգության և պահակային ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՊՃՀ-ԲԸԾՁԲ-13/1» ծածկագրով հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 1-ին կետով սահմանվել է, որ մասնակից ընկերությունը պետք է ունենա տվյալ ոլորտում առնվազն 5 տարվա գործունեության փորձ, մինչդեռ այդ որակավորման չափանիշը արդեն իսկ գնահատվել է հրավերի 2-րդ մասի 1-ին և 2-րդ ենթակետերով, ինչպես նաև վերը նշված պահանջը չի համապատասխանում այդ կետով սահմանված փորձառության ժամկետներին, որոնցով սահմանվել են հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող 3 տարիների ժամանակահատվածը:

Անհասկանալի է համարել նաև, թե ինչու է պատվիրատուն աշխատակիցների տարիքը սահմանափակում 22-55 տարեկանների միջակայքում, որքանով է

պատվիրատուն համոզված, որ օրինակ, 21-24 տարեկան աշխատակիցները չեն կարող բավարար չափով կատարել իրենց ծառայողական պարտականությունները:

1-ին կետի վերաբերյալ

- Հրավերին կից պայմանագրի նախագծի N 1 Հավելվածով՝ տեխնիկական բնութագրի (այսուհետև՝ Բնութագիր)՝ «Հատկանիշները (բնութագիրը)» սյունակի 1-ին կետով սահմանվել է, որ Կատարող ընկերությունը պետք է ունենա առնվազն 5 տարվա գործունեության փորձ տվյալ ոլորտում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ նաև Օրենք) 5-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ նաև Կարգ) 80-րդ կետի.

- 1-ին ենթակետի համաձայն, Մասնակիցների՝ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված՝ «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ մասնակիցը հայտով ներկայացնում է նախկինում կատարված պայմանագրերի առարկայի, ծավալի՝ գումարային արտահայտությամբ (ՀՀ դրամ), պատվիրատուի և նրա հետ կապ հաստատելու տվյալների մասին տեղեկություններ:
- 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը համարվում է օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի պահանջին բավարարող, եթե հայտով ներկայացնում է պահանջվող տեղեկությունները և հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում վերջինս պատշաճ ձևով իրականացրել է գնման առարկա հանդիսացող կամ համանման ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործարքներ՝ նախկինում կատարված պայմանագրեր:

Հրավերի 1-ին մասի 2.3 կետի 1-ին ենթակետով սահմանվել է, որ մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների

կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը:

Հրավերի 2-րդ մասի «Բաց ընթացակարգի հայտը պատրաստելու» հրահանգի (այսուհետ՝ Հրահանգ) 2.2 կետի 1-ին ենթակետի համաձայն, մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը:

Հրահանգի 2.2.3 կետի համաձայն՝ մասնակիցները հայտով ներկայացնում են Հավելված 3.1-ով (մասնագիտական գործունեության համապատասխանություն՝ պայմանագրով նախատեսված գործունեությանը) պահանջվող տեղեկությունները և հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում վերջինս պատշաճ ձևով իրականացրել է գնման առարկա հանդիսացող կամ համանման ծառայությունների մատուցման գործարքներ՝ նախկինում կատարված պայմանագրեր, այդ դեպքում մասնակիցը համարվում է 2.2.2 կետի 1) ենթակետի պահանջին բավարարող:

Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ Հրավերին կից պայմանագրի նախագծի N 1 Հավելվածով՝ տեխնիկական բնութագրի՝ «Հատկանիշները (բնութագիրը)» սյունակի 1-ին կետով՝ «Կատարող ընկերությունը պետք է ունենա առնվազն 5 տարվա գործունեության փորձ տվյալ ոլորտում», սահմանված հատկանիշը չի բխում Կարգի 80-րդ կետով, Հրահանգի 2.2.3 կետով սահմանված պահանջներին, քանի որ Կարգի 80-րդ կետով և Հրահանգի 2.2.3 կետով սահմանված է, որ մասնակցի «Մասնագիտական գործունեության համապատասխանություն՝ պայմանագրով նախատեսված գործունեությանը» չափանիշը գնահատվում է բավարար, եթե մասնակիցը հայտով ներկայացնում է պահանջվող տեղեկությունները և հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում վերջինս պատշաճ ձևով իրականացրել է գնման առարկա հանդիսացող կամ համանման ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործարքներ՝ նախկինում կատարված պայմանագրեր, մինչդեռ Հրավերին կից պայմանագրի նախագծի N 1 Հավելվածով՝ տեխնիկական բնութագրի՝ «Հատկանիշները (բնութագիրը)» սյունակի 1-ին կետով սահմանվել է, որ Կատարող

ընկերությունը պետք է ունենա առնվազն 5 տարվա գործունեության փորձ տվյալ ոլորտում:

Հրավերին կից պայմանագրի նախագծի N 1 Հավելվածով՝ տեխնիկական բնութագրի՝ «Հատկանիշները (բնութագիրը)» սյունակի 2-րդ կետով սահմանվել է, որ Պահնորդական անձնակազմի աշխատակիցների տարիքը պետք է լինի 25-55:

Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Գտնում ենք, որ Պատվիրատուի կողմից չեն պահպանվել Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով սահմանված պահանջները, քանի որ Հրավերին կից պայմանագրի նախագծի N 1 Հավելվածով՝ տեխնիկական բնութագրի՝ «Հատկանիշները (բնութագիրը)» սյունակի 2-րդ կետում նշված՝ պահնորդական անձնակազմի աշխատակիցների տարիքը 25-ից 55 տարեկան լինելու սահմանումը օբյեկտիվորեն հիմնավորված չէ և նշված պահանջի սահմանման վերաբերյալ Պատվիրատուի կողմից որևէ հիմնավորում չի ներկայացվել:

Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ այս հիմքով բողոքը հիմնավոր է:

2. Բողոքաբեր կազմակերպությունը հայտնել է, որ Հրավերին կից պայմանագրի նախագծի՝

N 1 Հավելվածով՝ տեխնիկական բնութագրի.

- 2-րդ կետով սահմանված է վերահսկողության տակ գտնվող տարածքի նվազագույն մակերես (Հավելված 2) և չի նշվել առավելագույն մակերեսը, ուստի վերոհիշյալից կարելի է ենթադրել, որ պատվիրատուն պայմանագրի գործողության ընթացքում ինչ-ինչ հանգամանքներից ելնելով իրեն կարող է իրավունք վերապահել կատարողին առաջադրել պահպանության ևս որոշակի չափի մակերես,
- 3-րդ կետը թերի է, քանի որ հասկանալի չէ կապի որ տեսակի մասին է խոսքը՝ ստացիոնար, թե ձեռքի հատուկ կապի միջոց, բջջային, թե քաղաքային և այլն,
- 4-րդ կետի պահանջն անհասկանալի է, մասնավորապես տեսադիտման և ահազանգման համակարգերի իմացության ինչպիսի փորձ է պահանջում պատվիրատուն, ինչ չափորոշիչներով է այն գնահատվում և որն է համարվում բավարար,

- 5-րդ կետով նախատեսվում է, որ կատարող կողմը պետք է կանխի խոշոր նյութական արժեքների չարտոնված տեղաշարժը: Նշված կետի վերլուծությունից երևում է, որ պատվիրատուն խրախուսում է ոչ խոշոր նյութական արժեքների չարտոնված տեղաշարժը: Հասկանալի չէ, թե ինչ չափանիշներով պետք է ծառայություն իրականացնող անձը որոշի տվյալ նյութական արժեքը պատկանում է խոշոր, թե ոչ խոշոր նյութական արժեքների դասին: Նաև խոշոր նյութական արժեք ասելով պատվիրատուն ի նկատի ունի տվյալ արժեքի դրամական արտահայտությունը, թե ծավալը կամ մակերեսը, հստակ չի սահմանվում արտոնված տեղաշարժ թույլտվող մարմինը,
- 6-րդ կետում չի սահմանվում, թե հերթապահ մասը որ մասնաշենքում կամ տարածքում է տեղակայվելու, ինչ մակերես և հագեցվածություն պետք է ունենա: Նշված կետով սահմանվում է ավտոտրանսպորտային միջոցների առկայություն, տվյալ դեպքում պետք է պահանջվեր դրանց տեսակը, քանակը, համալրվածությունը (լուսաձայնային ազդանշան, հատուկ եզրագիծ, կատարողի տարբերանշանները) և այլն,
- 7-րդ կետով խախտվում է «Հրդեհային անվտանգության մասին» և «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքների դրույթները, քանի որ տվյալ կետում նշված պարտականությունները դրված են պատվիրատուի վրա և որևէ առնչություն չունեն անվտանգության և պահակային ծառայության պարտականությունների հետ:

N 2 Հավելվածով՝ պահպանվող մասնաշենքերի մակերեսները, հասցեն, համարը, նշանակությունը և պահպանության ժամերը աղյուսակի պահպանման ենթակա մասնաշենքերի մակերեսների հետ մեկտեղ պետք է նշվեր նաև դրանց հարկայնությունը, մուտքերի քանակը և այլն: Պատվիրատուի կողմից պետք է հստակ նշվեր, թե կատարողը անվտանգության ծառայությունը մատուցում է մասնաշենքերի միայն առաջին, թե բոլոր հարկերում և ինչ կարգով, ինչպես նաև նշված հավելվածում ներառված մասնաշենքերի ցանկից թիվ 4, թիվ 20 և ավտոտնտեսության մասնաշենքերի մակերեսները նշված չեն, որը կատարողին հնարավորություն չի տալիս հստակ կազմակերպելու նշված մասնաշենքերի անվտանգությունը: Իսկ նույն հավելվածի աշխատանքային ժամերի սյունակում նշված 12 ժամյա պահակետերում պատվիրատուի կողմից պետք է նշվեր ժամային միջակայքը, օրինակ 18:00-06:00 կամ 20:00-08:00 և այլն:

2-րդ կետերի վերաբերյալ

Հրավերին կից պայմանագրի նախագծի՝

N 1 Հավելվածով՝ տեխնիկական բնութագրի՝ «Հատկանիշները (բնութագիրը)» սյունակի.

- 2-րդ կետով սահմանվել է, որ կատարողի վերահսկողության տակ գտնվող տարածքի ընդհանուր մակերեսը պետք է լինի ոչ պակաս, քան Հավելված 2-ում նշված մակերեսը,
- 3-րդ կետով սահմանվել է, որ Կատարող ընկերությունը պարտավորվում է պահպանության ենթակա բոլոր պահակակետերի աշխատակիցներին հանդերձավորել համապատասխան արտահագուստով (գարուն-ամառ, աշուն-ձմեռ) կրելով «Պոլիտեխնիկ» տարբերանշանը և օրենքով թույլատրվող հատուկ միջոցներ և կապի միջոցներով,
- 4-րդ կետով սահմանվել է, որ Կատարող ընկերությունը պարտավորվում է բոլոր մասնաշենքերը սարքավորել պահնորդի շարժման հետագծի վերահսկիչ տեխնիկական միջոցներով: Յուրաքանչյուր պահնորդ պետք է ունենա տեսադիտարկման և ահազանգման համակարգերի շահագործման համար բավարար փորձ,
- 5-րդ կետով սահմանվել է, որ Կատարող կողմը պարտավոր է ցերեկային հերթափոխի ընթացքում իրականացնել հասարակական կարգի վերահսկողություն, կանխել խոշոր նյութական արժեքների չարտոնված տեղաշարժը, արագ արձագանքել արտակարգ իրավիճակների դեպքերում (հրդեհ, երկրաշարժ, ահաբեկչություն և այլն),
- 6-րդ կետով սահմանվել է, որ Կատարող կողմը պարտավոր է գիշերային հերթափոխի ընթացքում ապահովել հերթապահ մասի և պարեկային շարժական խմբերի առկայությունը տարածքում, ինչպես նաև ապահովել գիշերային հերթափոխի աշխատանքների և օպերատիվ իրավիճակի վերահսկումը իր ընկերության ավտոմիջոցներով,
- 7-րդ կետով սահմանվել է, որ Կատարողը պարտավոր է մատուցել հակահրդեհային և քաղպաշտպանության գծով պատասխանատուների ծառայություններ:

N 2 Հավելվածով՝ պահպանվող մասնաշենքերի մակերեսները, հասցեն, համարը, նշանակությունը և պահպանության ժամերը աղյուսակի.

- 4-րդ և 18-րդ տողերում նշված չեն համապատասխանաբար թիվ 4 մասնաշենքի և ավտոտնտեսության մակերեսները:
- «Աշխատանքային ժամեր» սյունյակում որպես թիվ 4, թիվ 13, թիվ 14, թիվ 21 թիվ 17, թիվ 18 մասնաշենքերի պահպանության ժամեր նշված է «12 գիշեր» արտահայտությունը, իսկ նույն հավելվածում նշված մնացած պահպանվող տարածքների մասով «24» թիվը:

Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը:

Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուի կողմից չեն պահպանվել Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները, քանի որ տեխնիկական բնութագրում բացակայում են որոշ պահպանման ենթակա տարածքների մակերեսները, հստակ սահմանված չեն՝ պահպանությունը բնութագրում նշված մասնաշենքերի ո՞ր հարկում պետք է իրականացվի, որո՞նք են հանդիսանում օրենքով թույլատրվող հատուկ և կապի միջոցները, ո՞րն է համարվում պահնորդի տեսադիտարկման և ահազանգման համակարգերի շահագործման համար բավարար փորձը կամ խոշոր նյութական արժեքների հասկացությունը և դրանց արտոնված տեղաշարժը, որտե՞ղ պետք է տեղակայված լինի հերթապահ մասը, հրավերով նախատեսված 12 ժամյա պահպանության ժամանակ ո՞ր ժամերի միջակայքում պետք է իրականացվի պահպանությունը, հակահրդեհային և քաղպաշտպանության գծով պատասխանատուների ինչպիսի՞ ծառայություններ պետք է մատուցվեն, ինչպես նաև Պատվիրատուի կողմից Կենտրոնին ներկայացված 25.02.2013թ. N 01/13.1/382-13 գրությամբ և բողոքի քննության ընթացքում չի ներկայացվել որևէ ապացույց այն մասին, որ գնման առարկայի բնութագրերը ամբողջությամբ և հստակ նկարագրում են ձեռքբերվող ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման պայմանները և բացառվում է այլընտրանքային մեկնաբանությունը:

Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ այս հիմքերով բողոքը հիմնավոր է:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի այն պնդմանը, որ Պետական պահպանության գլխավոր վարչությունը հրավերով ունեցել է պարզաբանումներ պահանջելու և ստանալու իրավասություն և բավարար ժամանակ, ու այդ հանգամանքը

նաև կօժանդակեր Պատվիրարուին՝ քննարկելու հնարավոր անհամապատասխանություններն ու թերությունները և դրանք ընդունելի համարելու դեպքում վերացնել դրանք՝ հրավերում փոփոխություններ կատարելու ձևով, գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ դա բողոքաբեր ընկերության իրավունքն է, այլ ոչ թե պարտականությունը:

Վերոգրյալի հիման վրա և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետը գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Պետական պահպանության գլխավոր վարչության կողմից 12.02.2013թ. ներկայացված բողոքը բավարարել:

2. Դադարեցնել «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կարիքների համար «Անվտանգության և պահակային ծառայությունների ձեռքբերման նպատակով» «ՀՊՃՀ-ԲԸԾՁԲ-13/1» ծածկագրով բաց ընթացակարգ հայտարարելու մասին «ՀՊՃՀ-ԲԸԾՁԲ-13/1» ծածկագրով բաց ընթացակարգի հանձնաժողովի 12.11.2012թ. թիվ 1 որոշումը:

Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Գոռ Ենոքյան

Անդամ՝ Էդուարդ Շախկյան